ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2001 թվականի սեպտեմբերի 25-ին

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 47. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ և ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

1. Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրությամբ սահմանված ժամկետի ընթացքում կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով և «Բանկերի, ~~և~~ վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի:

Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող Ընկերության արժեթղթերի սեփականատերերն իրենց իրավունքից օգտվում են բաժնետերերից առաջ՝ Կանոնադրությամբ սահմանված ժամկետներում:

2. Բաց ընկերության ժողովն իրավունք ունի որոշելու չկիրառել (կասեցնելու) քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված նախապատվության իրավունքը, ինչպես նաև սահմանելու այդ որոշման գործողության ժամկետը, եթե քվեարկող բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության միջոցով, և տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով:

3. Նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը դադարում է, եթե մինչև դրա ավարտվելն Ընկերության բոլոր բաժնետերերից ստացվել է նախապատվության իրավունքից օգտվելու կամ օգտվելուց հրաժարվելու վերաբերյալ գրավոր ծանուցում:

4. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի վրա, որոնք ձեռք են բերել ձայնի իրավունք՝ սույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

(47-րդ հոդվածը փոփ. 27.04.04 ՀՕ-66-Ն, լրաց. 22.12.10 ՀՕ-273-Ն, խմբ. 19.04.19 ՀՕ-18-Ն)

ՀՈԴՎԱԾ 52. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐՈՒՄ ԳՐԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԸ

1. Ընկերության բաժնետերերի ռեեստրում բաժնետիրոջ կամ անվանատիրոջ վերաբերյալ գրառումը կատարվում է բաժնետիրոջ կամ անվանատիրոջ պահանջով: Ընկերության բաժնետերերի ռեեստրում այլ գրառումները, ինչպես նաև սույն օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով աշխատակիցներին տրամադրվող բաժնետոմսերի վերաբերյալ գրառումները կատարվում են նաև Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի կամ այլ լիազորված անձի պահանջով: Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրառման համար ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված պահանջներին, և առկա չեն գրառումը չկատարելու՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված հիմքեր, ապա գրառումը կատարվում է փաստաթղթերը ներկայացնելու պահից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Ռեեստրում գրառում կատարելու մերժում չի թույլատրվում, բացառությամբ օրենքով և իրավական ակտերով սահմանված դեպքերի: Նման մերժման դեպքում ռեեստր վարողը դրանում գրառում կատարելու պահանջը ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում գրառում պահանջող անձին հիմնավորված ծանուցում է մերժման մասին:

Ռեեստրում գրառման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով: Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ռեեստր վարողը պարտավոր է համապատասխան գրառում կատարել դրանում:

3. «Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանված կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի նշանակալից մասնակցի վերաբերյալ բաժնետերերի (անվանատերերի) ռեեստրում գրառման համար, ի հավելումն ռեեստրում գրառման համար օրենքով և իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերի, մասնագիտացված կազմակերպությանը ներկայացվում է նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի նշանակալից մասնակից դառնալու համար Կենտրոնական բանկի կողմից տվյալ անձին տրամադրված նախնական համաձայնություն տալու մասին որոշումը: